Արձանագրություն N 2

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի» կարիքների համար՝ Շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների թիվ ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից հայտերի բացման նիստի

ք. Երևան «29» «օգոստոսի» 2019թ.

*Հանձնաժողովի նախագահ*

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ) | Սամվել Առաքելյան |

*անդամներ՝*

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ) | Էդուարդ Ջանջուղազյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Արթուր Սողոմոնյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ) | Ալվարդ Հարությունյան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀՄ) | Արեգ Եղիյան |

1. ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/10 ծածկագրով մրցույթի հայտերի բացումը, օրը և ժամը

1 ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/10 ծածկագրով մրցույթի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2019 թվականի օգոստոսի 26-ին, ժամը 10:00-ին: Նիստը տեղի է ունեցել սույն թվականի օգոստոսի 26-29-ը:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումների (անունների) և էլեկտրոնային հասցեների հրապարակում

1 Հայտեր ներկայացվել են հետևյալ մասնակիցների կողմից.

| Մասնակիցների անվանումները | էլ.փոստ |
|---|---|
| Ալտերնատիվ ՍՊԸ | gasparann@yahoo.com |
| ԳՐԻՏԻԳ ՍՊԸ | gritig@inbox.ru |
| ՇԻՆԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ | shinkentron@gmail.com |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ տեղեկություններ

Հանձնաժողովն արձանագրեց, որ

- Մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված փաթեթները կազմված էին հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
- Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում առկա էին հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:
- Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված էին հրավերի պահանջներին համապատասխան:

Որոշվեց՝

1. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Տվյալներ մասնակիցների կողմից առաջարկված գների վերաբերյալ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակցի/ների/ գնային առաջարկը/ները/՝ հիմք ընդունելով տառերով գրվածը՝ համաձայն որի՝

ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Նախահաշ-վային գինը | Ալտերնատիվ ՍՊԸ | ԳՐԻՏԻԳ ՍՊԸ | «ՇԻՆԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ | Նվազագույն գին առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տեխնիկական հսկողության ծառայություններ | **614,636** | 300,000 | 510,000 | 550,000 | **300,000** |

Հաշվի առնելով այն, որ ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/10 ծածկագրով ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի հիման վրա, և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով՝

Որոշվեց՝

1. Նիստը կասեցնել:
2. Բավարար գնահատված մասնակիցներին ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին:
3. Բանակցություններն անցկացնել 2019 թվականի օգոստոսի 29-ին, ժամը՝ 11:00-ին:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձաժողովն արձանագրեց, որ բավարար գնահատված մասնակիցներից ոչ մեկը բանակցություններին չի ներկայացել:

Որոշվեց՝

4. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ հաստատել ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների ցանկը՝ համաձայն աղյուսակի՝

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Նախահաշ-վային գինը | Ալտերնատիվ ՍՊԸ | ԳՐԻՏԻԳ ՍՊԸ | «ՇԻՆԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տեխնիկական հսկողության ծառայություններ | 614,636 | 1-ին տեղ | 2-րդ տեղ | 3-րդ տեղ |

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 5. Տվյալներ հայտերի վերաբերյալ կատարված հարցումների, պատասխանների և հրավերում կատարված փոփոխությունների մասին

Հանձաժողովն արձանագրեց, որ

1. Հրավերում փոփոխություններ չեն իրականացվել:
2. Հարցումներ և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 6. Հանձնաժողովը որոշեց՝

1. «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/10» ծածկագրով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից հայտարարել՝բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ «ԱԼՏԵՐՆԱՏԻՎ» ՍՊԸ-ին:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել՝ «ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/10» ծածկագրով մրցույթի մասնակիցների մասին պահանջվող տեղեկատվությունը ստանալու նպատակով:

3. Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի՝ **1-ին տեղ զբաղեցրած մասնակցին** ծանուցել, որ հրավերով սահմանված կարգով ծանուցումը ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային ձևով ներկայացնի հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ ուղարկելով Պատվիրատուի հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ a.yeghiyan@atdf.am՝ հաստատելով դրանք էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

## 7. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Որոշվեց՝

1. «<u>ՀԾ-ԳՀ-ԾՁԲ-2019/10</u>» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստ հրավիրել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեից եզրակացությունը գնահատող հանձնաժողովին տրամադրման օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը՝ 10:00-ին, ՀՏԶՀ գրասենյակի շենքում, հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Ուլնեցի 31., 4-րդ հարկ:

Կողմ՝ 4, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ*՝

Սամվել Առաքելյան

*անդամներ*՝

Էդուարդ Ջանջուղազյան

Արթուր Սողոմոնյան

Ալվարդ Հարությունյան

*քարտուղար*՝

Արեգ Եղիյան